ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2024թ. թիվ 516-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ԹԻՎ 193-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետին կից՝ հասարակական կազմակերպություններից և մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի 30.07.2024թ. նիստի թիվ 1 արձանագրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2022թ. ապրիլի 15-ի «ՀՀ Լոռու մարզպետին կից՝ հասարակական կազմակերպություններից և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 193-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. օգոստոսի 6
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2024թ. օգոստոսի 6-ի
թիվ 516-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Լոռու մարզպետին կից հասարակական կազմակերպություններից և ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) նպատակն է սերտ գործակցության նոր հարթակ ձևավորել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և մարզպետի աշխատակազմի միջև, քննարկել քաղաքացիական հասարակությանը մտահոգող տարաբնույթ խնդիրներ, առավել սերտ կապ ապահովել քաղաքացիական հասարակության և պետական կառույցների միջև:

2. Աշխատանքային խումբը գործում է հասարակական հիմունքներով, նիստեր հրավիրվում են սույն Կանոնակարգին համապատասխան: Աշխատանքային խումբը ձևավորվում է ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Մարզպետի աշխատակազմ) և մարզում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Ըստ անհրաժեշտության, Աշխատանքային խմբի նիստին կարող են հրավիրվել մարզում ծրագրեր իրականացնող կառույցների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

3. Աշխատանքային խումբն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ինչպես նաև սույն կանոնակարգի հիման վրա:

4. Աշխատանքային խումբն իր նիստերը կազմակերպում է ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում /Վանաձոր, Հայքի հրապարակ թիվ 1 հասցեում/, ըստ անհրաժեշտության՝ նաև արտագնա:

5. Աշխատանքային խմբի աշխատանքների նյութատեխնիկական և կազմակերպչական օժանդակությունն իրականացնում է Մարզպետի աշխատակազմը:

ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Աշխատանքային խմբի նպատակն է՝

- աջակցել ՀՀ Լոռու մարզպետի գործունեությանը՝ քաղաքացիական հասարակության հետ համագործակցության բնագավառում.
- սերտ համագործակցության նոր հարթակ ձևավորել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և Մարզպետի աշխատակազմի միջև,
- աջակցել ՀՀ Լոռու մարզում զարգացման ծրագրերի իրականացմանը.
- նպաստել մարզի ռեսուրսների (տեղեկատվական, մարդկային և այլ) համախմբմանը, տեղեկատվության փոխանակմանը՝ ի նպաստ մարզի զարգացման:
- ուսումնասիրել քաղաքացիական հասարակությանը մտահոգող խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ.
- համագործակցել Աշխատանքային խմբի կազմում չընդգրկված հասարակական կազմակերպությունների, ակտիվ քաղաքացիական խմբերի հետ.
- ՀՀ Լոռու մարզպետի ուշադրությունը հրավիրել մարզի տարածքում կարևորություն ունեցող խնդիրների վրա.

- իրականացնել սույն Կանոնակարգին համապատասխան ՀՀ օրենսդրությամբ չարգելված գործունեություն:

2. Աշխատանքային խմբի խնդիրներն են՝

- հասարակական կազմակերպությունների և միությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ կառույցների ուժերի ներգրավմամբ հանրային կարևորության այն խնդիրների վերհանումը, ինչպես նաև լուծման հնարավոր ուղիների քննարկումը, որոնք անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել մարզային, համայնքային ծրագրերում և դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը ՀՀ Լոռու մարզպետին.

- Աշխատանքային խմբի կողմից սահմանված բնագավառներում գործող հասարակական կազմակերպությունների համագործակցությանն ուղղված կոնկրետ գործողությունների իրականացումը,

- հանրային հետաքրքրություն ունեցող թեմաների վերաբերյալ Մարզպետի աշխատակազմի կողմից տեղեկատվության տրամադրումը,

- Աշխատանքային խմբում ընդգրկված հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելը.

- նախապատրաստել Աշխատանքային խմբի իրավասության մեջ մտնող հարցեր՝ ՀՀ Լոռու մարզպետին ներկայացնելու համար.

- Մարզի հասարակական կազմակերպությունների և միավորումների կողմից արված առաջարկությունների և դրանց վերլուծության արդյունքների ներկայացումը ՀՀ Լոռու մարզպետին:

ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. Աշխատանքային խումբը կազմված է 24 անդամից:

2. ՀՀ Լոռու մարզպետն իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբն ունի ղեկավար /որն ի պաշտոնե մարզպետի տեղակալն է/, ղեկավարի տեղակալ /որն ի պաշտոնե Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետն է/, քարտուղար /որը Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության աշխատակից է/ և անդամներ, որոնցից 5-ը մարզպետի աշխատակազմի, 16-ը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ են:

Վերջիններիս ընտրությունը կատարվում է հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ակտիվ ներկայացուցիչների կողմից՝ քվեարկությամբ: Հասարակական կազմակերպություններից Աշխատանքային խմբում ընդգրկվում են ներկայացուցիչներ Աշխատանքային խմբի կողմից սահմանված բնագավառներից, դրանք են՝ Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդություն, Քաղհասարակություն և համայնքային զարգացում, Բնապահպանություն, Տնտեսական և զբոսաշրջության զարգացում, Քաղպաշտպանություն և անվտանգության ապահովում, Առողջապահություն, Հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության խոցելի այլ խմբերի սոցիալական պաշտպանություն, Երեխաների և կանանց իրավունքների պաշտպանություն, Իրավունքների պաշտպանություն:

Մարզպետի աշխատակազմից աշխատանքային խմբում ընդգրկվում են ներկայացուցիչներ Կրթության, մշակույթի և սպորտի, Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի, Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություններից, Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնից:

Աշխատանքային խմբի անդամներն աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

3. Աշխատանքային խումբը գլխավորում է Աշխատանքային խմբի ղեկավարը:

ԳԼՈՒԽ 4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԸ

1. Կազմակերպում է Աշխատանքային խմբի գործունեությունը և ղեկավարում դրա աշխատանքը:

2. Հաստատում է Աշխատանքային խմբի նիստի օրակարգը:
3. Հրավիրում է Աշխատանքային խմբի նիստերը:
4. Ստորագրում է Աշխատանքային խմբի նիստի արձանագրությունը:
5. Կատարում է աշխատանքի բաշխում աշխատանքային խմբի անդամների միջև:
6. Աշխատանքային խմբի ղեկավարի բացակայության ժամանակ նրան փոխարինում է իր տեղակալը:

ԳԼՈՒԽ 5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Աշխատանքային խմբի անդամն իր գործունեությունն իրականացնում է անձամբ:
2. Աշխատանքային խմբի անդամը նշանակվում է ՀՀ Լոռու մարզպետի որոշմամբ:
3. Աշխատանքային խմբի անդամի լիազորությունները դադարում են ՀՀ Լոռու մարզպետի որոշմամբ՝
1) իր դիմումի համաձայն,
2) եթե Աշխատանքային խմբի անդամը անհարգելի պատճառով չի մասնակցել առնվազն 3 նիստի,
3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով՝ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու դեպքում:
4. Աշխատանքային խմբի անդամի լիազորությունները դադարելու դեպքում՝ նա փոխարինվում է մեկ այլ անդամով. մարզպետի աշխատակազմի պաշտոնյա լինելու դեպքում՝ աշխատանքային խմբի ղեկավարի առաջարկությամբ և ՀՀ Լոռու մարզպետի որոշմամբ, հասարակական կազմակերպության կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ լինելու դեպքում՝ վերջիններիս առաջարկությամբ և աշխատանքային խմբի քվեարկությամբ:
5. Աշխատանքային խմբի անդամն իրավունք ունի՝
1) Նիստերին հանդես գալ ելույթով, ազատ արտահայտել իր կարծիքը, ներկայացնել առաջարկություններ:
2) Նախապես ծանոթանալ Աշխատանքային խմբի նիստի օրակարգին:
3) Անձամբ մասնակցել Աշխատանքային խմբի նիստերին և որոշումների ընդունմանը:
4) Նախապես տեղեկացնել իր բացակայության վերաբերյալ Աշխատանքային խմբի ղեկավարին:

ԳԼՈՒԽ 6. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Աշխատանքային խումբն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով:
2. Աշխատանքային խմբի նիստերը գումարվում են տարվա մեջ առնվազն չորս անգամ:
3. Աշխատանքային խմբի որոշումներն ընդունվում են առաջարկությունների ձևով և կրում են խորհրդատվական բնույթ:
4. Աշխատանքային խմբի անունից իրավունք ունի հանդես գալ Աշխատանքային խմբի ղեկավարը, վերջինիս բացակայության դեպքում Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալը և Աշխատանքային խմբի անդամը՝ Աշխատանքային խմբի ղեկավարի հանձնարարությամբ:
5. Աշխատանքային խմբի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է աշխատանքային խմբի անդամների կեսից ավելին:
6. Աշխատանքային խմբի ընդհանրական կարծիքի ձևավորման համար, քննարկվող հարցերի շուրջ որոշումներ է կայացվում բաց քվեարկությամբ՝ ներկա մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս, քան Աշխատանքային խմբի անդամների ընդհանուր թվի 2/3-ից: Ձայների հավասարության դեպքում Աշխատանքային խմբի ղեկավարի ձայնը վճռորոշ է:
7. Աշխատանքային խմբի նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կատարվում է առանձին քվեարկություն՝ այդ հարցի քննարկման ավարտից անմիջապես հետո:
Եթե քվեարկության արդյունքում առաջակությունը չի ընդունվում, ապա համարվում է, որ հարցի վերաբերյալ Աշխատանքային խումբը դրական կարծիք կամ եզրակացություն չի ներկայացրել:

8. Աշխատանքային խմբի ղեկավարը Աշխատանքային խմբի անդամներին իրազեկում է նիստի հրավիրման ժամկետից առնվազն մեկ շաբաթ առաջ:

9. Աշխատանքային խմբի նիստի օրակարգի ձևավորման գործընթացում ներգրավվում են խմբի բոլոր մասնակցիները, և յուրաքանչյուրը կարող է հարց ընդգրկել օրակարգում:

10. Աշխատանքային խմբի նիստերը դռնբաց են: Նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Աշխատանքային խմբի կազմում չընդգրկված հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական ակտիվ խմբերի ներկայացուցիչներ, ներկայացնել առաջարկություններ և կարծիք՝ քննարկվող հարցի վերաբերյալ:

11. Աշխատանքային խմբի նիստերն արձանագրվում և ստորագրվում են Աշխատանքային խմբի ղեկավարի կողմից:

12. ՀՀ Լոռու մարզպետի առաջարկությամբ Աշխատանքային խմբի ղեկավարը կարող է հրատապություն ներկայացնող Աշխատանքային խմբի առաջարկությունների նախագծերը ներկայացնել Աշխատանքային խմբի անդամների քննարկմանը:

13. Նիստին կարող են մասնակցել Աշխատանքային խմբի անդամ չհանդիսացող հրավիրված մասնագետներ և փորձագետներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

14. ՀՀ Լոռու մարզպետը կարող է ցանկացած ժամանակ՝ նախապես իրազեկելով նիստի օրվա մասին, հրավիրել Աշխատանքային խմբի արտահերթ նիստ:

15. Արտահերթ նիստ կարող է հրավիրվել նաև աշխատանքային խմբի անդամների 2/3-ի առաջարկությամբ:

ԳԼՈՒԽ 7. ՖՈՐՍՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

1. Արտակարգ իրավիճակային պայմաններում /պատերազմ, արտակարգ կամ ռազմական դրության հայտարարում, համաճարակ, բնական աղետներ և այլն/, Աշխատանքային խմբի անդամների՝ իրենց պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, որոնք չէին կարող կանխել կամ կանխատեսել, նրանք ազատվում են ստանձնած պարտավորություններից: Արտակարգ իրավիճակային պայմաններում Աշխատանքային խմբի անդամները, կամավորության սկզբունքով, կարող են ներգրավվել մարզպետի աշխատակազմի կողմից կազմակերպվող աշխատանքներին:

ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում ՀՀ Լոռու մարզպետի կողմից հաստատվելու պահից:

2. Բոլոր այն հարցերը, որոնք չեն ներառվել սույն կանոնակարգում, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

06/08/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ. ԱՇՐԱՖՅԱՆ